

Հավելված

Հաստատված է
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2005 թվականի ապրիլի 22-ի
N 43-Ն որոշմամբ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԿԱՐԳԱՔԵՐՄԱՆ-ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՔՎՈՂ
ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱԾՎԱՌՄԱՆ

" ____ " _____ 200_ թվական _____ ք. _____

(արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության
լիցենզիա ունեցող ընկերության անվանումը)

այսուհետ՝ Կառուցող, ի դեմս _____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով,
Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով, եւ

(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Բաշխող, ի դեմս _____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով,
Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով, եւ
Էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայությունների
մատուցման լիցենզիա ունեցող անձը _____

(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Ծառայություններ մատուցող, ի դեմս _____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով,
Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով, համատեղ
կոչվելով Կողմեր կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետեւյալի
մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Կառուցողը կարգաբերման-գործարկման աշխատանքների կատարման ընթացքում
արտադրվող էլեկտրաէներգիան առաքում է Բաշխողին, Ծառայություններ մատուցողը՝
հաշվառում է այն, իսկ Բաշխողը վճարում առաքված էլեկտրաէներգիայի համար՝
Պայմանագրով սահմանված կարգով:

2. Կողմերի պարտականությունները

2.1 Կողմերը պարտավորվում են ղեկավարվել "Էներգետիկայի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով եւ իրավական ակտերով, Պայմանագրով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ընդունած իրավական ակտերով:

2.2 Կառուցողը պարտավորվում է.

ա) մինչեւ կարգաբերման-գործարկման աշխատանքները սկսելը տեղադրել տեխնիկական պահանջներին համապատասխան առեւտրային հաշվառքի սարքեր՝ տեղեկացնելով Ծառայություններ մատուցողին.

բ) կարգաբերման-գործարկման աշխատանքների ծրագիրը համաձայնեցնել Քաշխողի հետ.

գ) էլեկտրաէներգիայի առաքումը իրականացնել Պայմանագրի 2.4 կետի ա) ենթակետում նշված ակտը կազմելուց հետո.

դ) իրականացնել իր սեփականությունը հանդիսացող առեւտրային հաշվառքի սարքերի սպասարկումը, պահպանումը.

ե) Քաշխողի եւ Ծառայություններ մատուցողի հետ համաձայնեցված կարգով ապահովել Քաշխողի եւ Ծառայություններ մատուցողի լիազոր ներկայացուցիչների մոտքը իր տարածք՝ առեւտրային հաշվառքի սարքերի անհրաժեշտ զննումներ (ստուգումներ) կատարելու համար:

2.3 Քաշխողը պարտավորվում է.

ա) վճարել առաքված էլեկտրաէներգիայի համար՝ Պայմանագրով սահմանված կարգով.

բ) ապահովել Կառուցողի եւ Ծառայություններ մատուցողի լիազոր ներկայացուցիչների մոտքը իր տարածք՝ առեւտրային հաշվառքի սարքերի անհրաժեշտ զննումներ (ստուգումներ) կատարելու համար, եթե Կառուցողին սեփականության իրավունքով պատկանող առեւտրային հաշվառքի սարքը տեղադրված է իր տարածքում:

2.4 Ծառայություններ մատուցողը պարտավորվում է.

ա) Կառուցողի կողմից տեղադրված առեւտրային հաշվառքի սարքերի վերաբերյալ կազմել տեխնիկական պահանջներին համապատասխանության ակտ՝ այն ներկայացնելով Քաշխողին.

բ) հաշվառել Կառուցողի առաքած էլեկտրաէներգիան:

3. Վճարման կարգը

3.1 Քաշխողը վճարում է կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում ստացած էլեկտրաէներգիայի համար Պայմանագրի 6.1 կետում նշված Հանձնաժողովի որոշումների պատճենները Կառուցողի կողմից ներկայացնելուց եւ էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչեւ առաջին հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 25-ը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

5. Ֆորս մաժորային իրավիճակներ

5.1 Կողմերն ազատվում են պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրանք հետեւեալն են արտակարգ եւ անկանխելի դեպքերի եւ հանգամանքների, որոնք ստեղծվել են Կողմերի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսեւորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, ինչպես նաեւ սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք

խոչընդոտում են Կողմերի գործունեությանը կամ հանգեցնում նրանց ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրանց գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

5.2 Կողմերը պարտավոր են վերոհիշյալ վիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետեւանքների վերացման հնարավոր ժամկետները:

6. Լրացուցիչ պայմաններ

6.1 Կառուցողը՝ Հանձնաժողովի կողմից տրված էլեկտրատեղակայի (հզորության) արտադրության լիցենզիայի որոշման պատճենը եւ առաքված էլեկտրատեղակայի (հզորության) համար սակագնի սահմանման մասին որոշման պատճենը ներկայացնում է Բաշխողին:

6.2 Առեւտրային եւ վերստուգիչ հաշվառքի սարքերն ու դրանց միացման շղթաները ստուգում եւ կապարակնում են Կառուցողը եւ Բաշխողը՝ Օառայություններ մատուցողի մասնակցությամբ:

6.3 Առեւտրային եւ վերստուգիչ հաշվառքի սարքերի սպասարկումն ու շահագործումն ապահովվում է սեփականատերերի կողմից՝ իրենց միջոցներով: Բաշխողը եւ Կառուցողը՝ իրենց տարածքում տեղադրված առեւտրային եւ վերստուգիչ հաշվառքի սարքերի խափանման դեպքում պարտավոր են տեղեկացնել միմյանց եւ Օառայություններ մատուցողին: Առեւտրային եւ վերստուգիչ հաշվառքի սարքերի փոխարինման դեպքում Կառուցողը եւ Բաշխողը համատեղ կազմում են համապատասխանակտ՝ այն ներկայացնելով Օառայություններ մատուցողին:

6.4 Եթե Կառուցողը կառուցում է 10 ՄՎտ եւ ավելին տեղակայված հզորություն ունեցող էլեկտրական կայան, ապա Պայմանագրի 2.2 կետի բ) ենթակետում նշված ծրագիրը պարտավոր է համաձայնեցնել էլեկտրատեղակայի համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձի հետ:

7. Տարածայնությունների լուծումը

7.1 Պայմանագրի առնչությամբ Կողմերի միջեւ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ՝ նրա կողմից սահմանված կարգով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

8. Այլ պայմաններ

9. Պայմանագրի գործողության ժամկետը եւ փոփոխման կարգը

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից եւ գործում է մինչեւ Պայմանագրի 3.1 կետում նախատեսված պարտավորության կատարման ավարտը:

9.2 Պայմանագիրը կարող է փոփոխվել փոխադարձ համաձայնությանբ: Փոփոխված պայմանագիրը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից:

9.3 Հանձնաժողովի կողմից կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրատեղակայի հաշվառման պայմանագրի նոր օրինակելի ձեւ հաստատելու կամ գործող օրինակելի ձեւում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում՝ ներկայացնելով դրանք Հանձնաժողովի գրանցմանը: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

9.4 Պայմանագիրը կազմված է 4 օրինակից՝ մեկական Կողմերի եւ

Հանձնաժողովի համար:

10. Կողմերի գտնվելու վայրը եւ հաշվարկային համարները

Կատուցող՝
գտնվելու վայրը _____
Հ/հ _____
Հեռախոս
Ֆաքս
Գործունեության լիցենզիա N
Ղեկավար

Բաշխող՝
գտնվելու վայրը _____
Հ/հ _____
Հեռախոս
Ֆաքս
Գործունեության լիցենզիա N
Ղեկավար

(ստորագրություն, անուն, ազգանուն)
Կ.Տ.

(ստորագրություն, անուն, ազգանուն)
Կ.Տ.

Ծառայություններ մատուցող՝
գտնվելու վայրը _____
Հ/հ _____
Հեռախոս
Ֆաքս
Գործունեության լիցենզիա N
Ղեկավար

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

| Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով |
| |
| Գրանցված է "___" _____ 200 _____ թվական |
| |
| Գրանցման N _____ Կ.Տ. |
| |
| Պատասխանատու _____ |
| (ստորագրություն, անուն, ազգանուն) |
| |